ԶԻՆԱՊԱՀ®

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԻԱՍԻՆ՝ ԶԻՆՎՈՐԻՍ ԿՈՂՔԻՆ...

2026Թ. 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

DONATE

zinapah.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- ԶԻՆԱՊԱՀԻ կառավարումը և ֆինանսական վերլուծությունը
- Կառավարման մարմինը և գործադիր թիմը
- Զարգացում և ֆինանսական անկախություն
- Ամփոփ պատմությունը, առաքելությունը, տեսլականը և արժեքները
- Գլխավոր գործադիր տնօրենի ուղերձը
- Գործառնությունները 2017 – 2026թթ.
- Ծահառուները և վճարված հատուցումները
- Ծահառուներին միտված աջակցման ծրագրեր և համագործակցություն

Կառավարման մարմինը և գործադիր թիմը

ԶԻՆԱՊԱՀ
ԶԻՆԵՑԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հոգաբարձուների խորհուրդ

Իրինա Սեյլանյան
Խորհրդի նախագահ

Ժոզեֆ Սիմոնյան
Խորհրդի անդամ

Անահիտ Ադամյան
Խորհրդի անդամ

Դավիթ Հակոբյան
Խորհրդի անդամ

Լարա Չոլակյան
Խորհրդի անդամ

Հասմիկ Եղյան
Խորհրդի անդամ

Թիմ

Կարինե Սարգսյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Կարեն Սահակյան
Ներքին աուդիտ

Գոհար Աբրահամյան
Գործառնական տնօրեն

Արմինե Վարդանյան
Ֆինանսական տնօրեն

Սմբատ Սահյան
Հատուցումների գծով տնօրեն

Լիլյա Գրիգորյան
Հանրային կապերի և հաղորդակցության տնօրեն

Մարիանա Հարությունյան
Ծրագրերի ղեկավար

Հրաչիկ Ավթանդիլյան
Հատուցումների համակարգող

Արփինե Զարգարյան
Սոցիալական ծրագրերի համակարգող

Ֆելիքս Չիլինգարյան
Պորտֆելի կառավարիչ

Լիլիթ Ղաբուզյան
Հաշվետար

Վազգեն Մարտիրոսյան
SS ծրագրի մենեջեր

Մարի Բոյաջյան
Գնումների և դրոշմ. վճարների վերադարձի համակարգող

Ռիմմա Հարությունյան
Ադմինիստրատիվ օգնական

ԶԻՆԱՊԱՀԻ ամփոփ պատմությունը, առաքելությունը, տեսլականը և արժեքները

ԶԻՆԱՊԱՀ

Զինծառայողների ապահովագրության ազգային հիմնադրամը հիմնադրվել է 2017թ.՝ ապահովելու կայուն հատուցումներ՝ զոհված և անհայտ բացակայող զինծառայողների ընտանիքների, ինչպես նաև ծանր և խորը ֆունկցիոնալ սահմանափակմամբ (1-ին և 2-րդ խմբի զինհաշմանդամություն ունեցող) զինծառայողների բարեկեցության ապահովմանը, ովքեր պաշտպանել են հայրենիքը և նրա սահմանները՝ ապագա սերունդների խաղաղության և անվտանգության համար:

ԶԻՆԱՊԱՀԸ ապաքաղաքական կառույց է, կառավարվում է **անկախ Հոգաբարձուների խորհրդի կողմից** և գործում է համաձայն **ՀՀ օրենքի**:

ԶԻՆԱՊԱՀԸ եզակի հիմնադրամ է տարածաշրջանում, որի շրջանակներում Հայաստանի յուրաքանչյուր աշխատող քաղաքացի պարտադիր վճար է կատարում իր աշխատավարձից: ԶԻՆԱՊԱՀԸ համահայկական նախաձեռնություն է, որի նպատակն է ապահովել կյանքը և առողջությունը հանուն Հայաստանի անվտանգության զոհաբերած զինծառայողների և նրանց ընտանիքների բարեկեցությունը:

ԶԻՆԱՊԱՀԻ միջոցները գոյանում են՝

- **Հայաստանի հարկատուների կողմից կատարվող դրոշմանիշային պարտադիր ամսական վճարներից՝ 1,000 կամ 15,000 ՀՀ դրամ** (կախված եկամտի չափից)
- **Հայաստանից և աշխարհից ստացվող նվիրատվություններից**
- **ԶԻՆԱՊԱՀԻ ակտիվների կառավարման արդյունքում ստացված եկամուտներից**

ԶԻՆԱՊԱՀԻ կառավարման բարձրագույն մարմինը Հոգաբարձուների խորհուրդն է, որը կազմված է բարձր հեղինակություն վայելող փորձառու մասնագետներից՝ ֆինանսների և բանկային գործի, բիզնեսի, ճգնաժամային կառավարման, դրամահավաքի և ակտիվների կառավարման ոլորտներում: ԶԻՆԱՊԱՀԻ գործառնական կառավարումը իրականացվում է բարձր մոտիվացիայով և փորձառու գործառնական թիմի կողմից:

ԶԻՆԱՊԱՀԻ կայքը արտացոլում է բոլոր ֆինանսական հոսքերը՝ նվիրատվությունները և պարտադիր վճարները, ինչպես նաև հրապարակում է շահառուների ցանկը և կատարված հատուցումները: ԶԻՆԱՊԱՀԻ կայքում հրապարակվում են նաև **գլխավոր գործադիր տնօրենի եռամսյակային, տարեկան հաշվետվությունները** և աշխարհի լավագույն 10 աուդիտորական ընկերություններից մեկի կողմից իրականացված **Տարեկան աուդիտի հաշվետվությունը**:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Համախմբել ազգին՝ կանգնելու զինծառայողների և նրանց ընտանիքների կողքին՝ ապահովելու նրանց ֆինանսական կայունությունը և արժանապատիվ կյանքը:

ՏԵՍԼԱԿԱՆԸ

Լինել սոցիալապես պատասխանատու հիմնադրամ զինծառայողների համար, որն իր մեջ ներառում է պարտադիր և կամավոր ապահովագրական հատուցումները:

ԱՐԺԵՔՆԵՐԸ

ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ, ՀԱԾՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ

Այսօր մեր պարտքն է կանգնել զոհված, անհայտ բացակայող և հաշմանդամ դարձած մեր զինծառայողների և նրանց ընտանիքների կողքին:

ԶԻՆԱՊԱՀԻ զարգացման ուղին դեպի ֆինանսական անկախություն

2017 թվականին հիմնադրման պահին ԶԻՆԱՊԱՀԻ կառավարումն իրականացվում էր կամավորական հիմունքներով Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից՝ ապահովելով հիմնադրամի գործունեության սկզբնական փուլում բարձր ինստիտուցիոնալ վերահսկողություն և կայունություն: 2021 թվականից սկսած ԶԻՆԱՊԱՀԸ մեկնարկել կառավարման մոդելի փուլային անցումը Կենտրոնական բանկի համակարգից դեպի լիարժեք անկախ իրավաբանական անձ՝ ձևավորելով սեփական գործառնական, ֆինանսական և տեխնոլոգիական ենթակառուցվածքները: Այս անցումը կարևոր փուլ էր հիմնադրամի ինստիտուցիոնալ ինքնավարության, կառավարման կարողությունների և երկարաժամկետ կայունության ամրապնդման ճանապարհին:

Թիմ և կառավարման կառուցվածք

ԶԻՆԱՊԱՀԻ կառավարումն իրականացվում է անկախ կառավարման մարմնի՝ **յոթ անդամից բաղկացած Հոգաբարձուների խորհրդի** կողմից, որն ապահովում է ռազմավարական ուղղորդում և ինստիտուցիոնալ վերահսկողություն: Հիմնադրամի առօրյա գործունեությունն իրականացվում է **14 աշխատակիցներից բաղկացած գործադիր թիմի** կողմից:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են կազմակերպական վերակազմավորման գործընթացները՝ նպատակ ունենալով ամրապնդել ԶԻՆԱՊԱՀԻ հիմնական կարողությունները որպես ֆինանսական կառույց՝ միաժամանակ ընդլայնելով նրա դերը սոցիալական ծրագրերի իրականացման ոլորտում՝ ՀՀ կառավարության հետ սերտ համագործակցությամբ: Միաժամանակ ներդրվել է աշխատակիցների զարգացման և գնահատման համակարգ՝ կիրառելով Teamflect թվային հարթակը, որը հնարավորություն է տալիս կառուցվածքային ձևով իրականացնել նպատակների սահմանում, կատարողականի մշտադիտարկում և թիմի մասնագիտական զարգացում:

Գործառնական գործընթացներ և ծառայությունների արտապատվիրակում

2025թ. ԶԻՆԱՊԱՀԸ վերսկսել է իր հանրային իրազեկման և հաղորդակցության արշավը՝ նպատակ ունենալով բարձրացնել թափանցիկությունը, հանրային ներգրավվածությունը և շահառուների իրազեկվածությունը:

Միևնույն ժամանակ ընթացքի մեջ է գտնվում 2025թ. աուդիտը, ինչը համահունչ է ԶԻՆԱՊԱՀԻ հաշվետվողականության և բարեվարք կառավարման սկզբունքներին:

Գործառնական արդյունավետությունն ու ծախսարդյունավետությունն ապահովելու նպատակով ԶԻՆԱՊԱՀԸ շարունակել է կիրառել արտապատվիրակման ծառայություններ հետևյալ հիմնական ուղղություններով՝

- **Մարդկային ռեսուրսների կառավարում**
- **Հաշվապահական ծառայություններ**
- **Զանգերի կենտրոնի գործունեություն**
- **Տեղեկատվական անվտանգության ծառայություններ**
- **Իրավաբանական խորհրդատվական ծառայություններ**

Այս մոտեցումը հիմնադրամին հնարավորություն է տալիս պահպանել համեմատաբար ճկուն ներքին կառուցվածք՝ միաժամանակ ապահովելով բարձրորակ ծառայությունների մատուցում:

Միգրացիա և ենթակառուցվածքների զարգացում

ԶԻՆԱՊԱՀԸ շարունակել է իր անցումը դեպի լիարժեք գործառնական անկախություն: Ավարտվել է zinapah.am կայքի գործարկումը, և ներկայում շարունակվում են տեխնիկական խնդիրների կարգավորման ու օգտատերերի փորձի բարելավման աշխատանքները: Միաժամանակ մեկնարկել են հատուցումների համակարգի ֆինանսական ենթակառուցվածքների մշակման աշխատանքները, որոնց տեխնիկական առաջադրանքը ներկայում մշակման փուլում է: Նախաձեռնությունը կարևոր քայլ է հատուցումների գործընթացների հետագա ավտոմատացման, ճշգրտության և մասշտաբայնության ապահովման ուղղությամբ:

Օրենսդրական փոփոխություններ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցության շրջանակում ԶԻՆԱՊԱՀԸ շարունակել է աշխատանքները օրենսդրական նախաձեռնության շուրջ, որի նպատակն է ամրապնդել հաշմանդամություն ունեցող զինծառայողների աջակցության մեխանիզմները: Ներկայում մշակման փուլում են համապատասխան օրենսդրական փոփոխություններ, որոնք միտված են գործառնական գործընթացների կատարելագործմանը և ակնկալվում է, որ կնպաստեն շահառուների երկարաժամկետ պաշտպանության և սոցիալական ներառման բարձրացմանը:

Գլխավոր գործադիր տնօրենի ուղերձը

Կարինե Սարգսյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Հարգելի՛ ԶԻՆԱՊԱՀԻ համայնք,

Ամփոփելով 2026թ. ԵՌ1-ը՝ պատիվ ունեմ ներկայացնելու ԶԻՆԱՊԱՀ Զինծառայողների ապահովագրության ազգային հիմնադրամի գործունեության վերաբերյալ հերթական հաշվետվությունը: Այս ժամանակահատվածը ևս մեկ անգամ արտացոլում է ինչպես հիմնադրամի ինստիտուցիոնալ կայացվածությունը, այնպես էլ մեր շարունակական պատասխանատվությունը հայրենիքի անվտանգության համար իրենց կյանքն ու առողջությունը զոհաբերած զինծառայողների և նրանց ընտանիքների հանդեպ:

2017թ. հիմնադրումից ի վեր ԶԻՆԱՊԱՀԸ ձևավորվել և կայացել է որպես համազգային նշանակության յուրահատուկ կառույց՝ հիմնված բարեվարքության, հաշվետվողականության և թափանցիկության սկզբունքների վրա: 2017-2026թթ. ԵՌ 1-ի դրությամբ հիմնադրամը հատուցումներ է տրամադրել 5,511 շահառուի՝ ապահովելով կայուն ֆինանսական աջակցություն զոհված, անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների ընտանիքներին, ինչպես նաև ծանր և խորը ֆունկցիոնալ սահմանափակում ունեցող զինծառայողներին: 2026 թ. ԵՌ 1-ում աջակցություն է տրամադրվել 1 նոր դեպքի, ինչը ևս մեկ անգամ վերահաստատում է մեր անսասան հանձնառությունը շահառուների հանդեպ:

Եթե 2025 թվականը նշանավորվեց ԶԻՆԱՊԱՀԻ ֆինանսական դիրքերի էական ամրապնդմամբ, ապա 2026 թ. ԵՌ 1-ը կարելի է բնութագրել որպես կառուցվածքային փոփոխությունների շրջան: Եռամսյակի ընդհանուր եկամուտը կազմել է 11.4 միլիարդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրելով 27% նվազում, ինչը հիմնականում պայմանավորված է պարտադիր դրոշմանիշային վճարների դրույքաչափերի փոփոխություններով: Չնայած որ 2025 թվականի դեկտեմբերից վերանայվել են պարտադիր դրոշմանիշային վճարների դրույքաչափերը, ցանկանում եմ վերահաստատել, որ ԶԻՆԱՊԱՀԸ շարունակում է գործել ֆինանսապես կայուն հիմքերի վրա, իսկ շահառուներին հատուցումների տրամադրումը շարունակվում են ամբողջ ծավալով, անխափան կերպով և օրենքով սահմանված ժամկետների և ընթացակարգերի համաձայն:

Միաժամանակ ակտիվների կառավարման եկամուտները շարունակել են ցուցաբերել կայուն աճ՝ տարեկան կտրվածքով աճելով 29%-ով և հասնելով շուրջ 3.7 միլիարդ ՀՀ դրամի: Դրանց մասնաբաժինը ընդհանուր եկամուտների կառուցվածքում կազմել է մոտ 32%՝ առավել ամրապնդելով հիմնադրամի անցումը դեպի ավելի կապիտալահեն և երկարաժամկետ կայուն ֆինանսական մոդելի: Հատկանշական է, որ ներկայումս ԶԻՆԱՊԱՀԻ ավելի քան 150 միլիարդ ՀՀ դրամ ընդհանուր ակտիվներ գտնվում են կառավարման ներքո: Նվիրատվությունների ծավալը կազմել է 15 միլիոն ՀՀ դրամ՝ արտացոլելով հետճգնաժամային ժամանակաշրջանին բնորոշ ընդհանուր կայունացման միտումները:

Չնայած եկամուտների նվազմանը՝ ֆինանսական կարգապահությունը պահպանվել է բարձր մակարդակում: Ընդհանուր ծախսերը կազմել են 4.8 միլիարդ ՀՀ դրամ՝ մնալով ընդհանուր առմամբ կայուն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ընդ որում հատուցումները կազմել են ընդհանուր ծախսերի 98%-ը:

Սա վերահաստատում է, որ ԶԻՆԱՊԱՀԸ շարունակում է հետևողականորեն և պատասխանատվությամբ իրականացնել իր հիմնական՝ օրենքով սահմանված առաքելությունը:

Թեև օրենսդրական փոփոխությունները ազդեցություն են ունեցել հիմնադրամի հիմնական ֆինանսավորման աղբյուրների վրա, ակտիվների կառավարման եկամուտների աճող դերը և ծախսերի արդյունավետ կառավարումը շարունակում են ապահովել հատուցումների կայունությունն ու կանխատեսելիությունը:

Ֆինանսական աջակցությունից բացի, ԶԻՆԱՊԱՀԸ շարունակում է ընդլայնել իր սոցիալական ներգրավվածությունն ու շահառուների աջակցության համակարգը: Պետական մարմինների, հիմնադրամների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակում մենք շարունակաբար աջակցում ենք շահառուներին կրթության, զբաղվածության, վերականգնողական ծառայությունների, հոգեբանական աջակցության և հասարակական ինտեգրման ուղղություններով: Շարունակական նախաձեռնությունները՝ ներառյալ շահառուների հետ հանդիպումները, կրթական ծրագրերը և zinapah.am կայքի թվային հարթակների զարգացումը, արտացոլում են մեր համոզմունքը, որ երկարաժամկետ աջակցությունը չի սահմանափակվում միայն ֆինանսական հատուցմամբ, այլ ներառում է նաև հնարավորություններ և ներառականություն մեր շահառուների համար:

Մինչ ԶԻՆԱՊԱՀԸ շարունակում է իր անցումը դեպի առավել կայուն ինստիտուցիոնալ մոդելի, մեր հիմնարար արժեքները մնում են անփոփոխ՝ թափանցիկություն, հաշվետվողականություն և բարեվարքություն: Այս սկզբունքներն են ընկած մեր յուրաքանչյուր որոշման և մեզ վստահված յուրաքանչյուր դրամի կառավարման հիմքում:

Խորին շնորհակալություն եմ հայտնում Հայաստանի աշխատող քաղաքացիներին, որոնց պարտադիր վճարներն այս համազգային համակարգի հիմքն են, մեր նվիրատուներին և գործընկերներին՝ շարունակական վստահության և համագործակցության համար, ինչպես նաև ԶԻՆԱՊԱՀԻ գործադիր թիմին և հոգաբարձուների խորհրդին՝ իրենց առաջնորդության, պրոֆեսիոնալիզմի և ամենօրյա նվիրումի համար:

Միասին մենք ոչ միայն հարգանքի տուրք ենք մատուցում մեր շահառուներին, այլ նաև կառուցում ենք ավելի կանխատեսելի, աջակցող և համախմբված ապագա Հայաստանի և մեր ժողովրդի համար:

Հարգանքով՝
Կարինե Սարգսյան
Գործադիր տնօրեն
ԶԻՆԱՊԱՀ

ՁԻՆԱՊԱՀԻ գործառնությունները 2017-2026թթ. ԵՌ 1 Սահող գնահատականով (ՍԳ)

2026թ. ԵՌ 1-ի կանխատեսվող արդյունքների համաձայն՝ ՁԻՆԱՊԱՀԻ ֆինանսական ցուցանիշները, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ակնկալվում է, որ կարտացոլեն **ընդհանուր եկամուտների ժամանակավոր նվազում՝** զուգորդված **ընդհանուր ծախսերի չափավոր աճով**: Ընդհանուր եկամուտները կանխատեսվում է, որ **կնվազեն 45%-ով**, ինչը հիմնականում պայմանավորված է **պարտադիր վճարների կառուցվածքի և ծավալների վրա ազդեցություն ունեցած օրենսդրական փոփոխություններով (-60% նախորդ տարվա համեմատ)**, մինչդեռ նվիրատվությունների հոսքերը ակնկալվում է, որ կշարունակեն իրենց **աստիճանական կայունացման միտումը (-14%):**

Միևնույն ժամանակ, **ակտիվների կառավարման եկամուտները** կանխատեսվում է, որ կշարունակեն ցուցաբերել դրական դինամիկա՝ **աճելով 16%-ով** և էապես ամրապնդելով իրենց դերը ընդհանուր ֆինանսավորման կառուցվածքում: Դրանց մասնաբաժինը ընդհանուր եկամուտների մեջ կանխատեսվում է, որ **կհասնի շուրջ 42%-ի (2025 թվականի 20%-ի դիմաց)**, ինչը վկայում է **կապիտալահեն եկամուտների աճող կարևորության** մասին՝ հիմնադրամի երկարաժամկետ կայունության ապահովման համատեքստում: Արդյունքում, չնայած մուտքերի տատանումներին, ֆինանսավորման կառուցվածքը ակնկալվում է, որ կշարունակի զարգանալ դեպի **առավել կայուն և կառուցվածքային առումով հավասարակշռված մոդելի**:

Ընդհանուր ծախսերը կանխատեսվում է, որ **կաճեն 9%-ով**, հիմնականում պայմանավորված **հատուցումների ծավալի 4% աճով**, ինչը արտացոլում է հիմնադրամի հիմնական պարտավորությունների շարունակական և հետևողական իրականացումը: **Վարչական և գործառնական ծախսերը** կանխատեսվում է, որ կմնան **վերահսկելի և համաչափ գործառնական պահանջներին**:

Ընդհանուր առմամբ, 2026 թվականի ԵՌ 1-ը ակնկալվում է, որ կարտացոլի ՁԻՆԱՊԱՀԻ շարունակական անցումը դեպի **առավել դիմակայուն**, **կապիտալահեն և կայուն ֆինանսական համակարգի,** որտեղ **ակտիվների կառավարման եկամուտների աճող դերը** և **կարգապահ ֆինանսական կառավարումը** շարունակում են աջակցել հիմնադրամի **երկարաժամկետ կայունությանը**:

մլն, ՀՀ դրամ	2017-2020***	2021	2022	2023	2024	2025	2026 ՍԳ	2017-2026 ՍԳ	2026թ. 2025-ի համեմատ	% հարաբ 2025	% հարաբ 2026
Եկամուտ պարտադիր վճարներից	30,914	29,072	35,274	43,199	45,393	49,171	19,494	252,518	-60%	79%	57%
Նվիրատվություններ	7,280	1,290	508	273	171	106	92	9,721	-14%	0.17%	0.27%
Կամուրջ նվիրատվություն*	1,000	1,510	239	237	86	77	73	3,221	-5%	0.12%	0.21%
ՀՀԿԲ**	-	301	-	-	-	-	-	301	NA	NA	NA
Ակտիվների կառավարում	4,970	1,841	3,256	5,944	9,339	12,570	14,519	52,440	16%	20%	42%
Այլ եկամուտներ տուգանքներից	-	0.24	0.19	0.26	0.29	0.58	0.09	2	-85%	0.0009%	0.0003%
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏ	**44,164**	**34,015**	**39,278**	**49,654**	**54,990**	**61,925**	**34,178**	**318,203**	**-45%**	**100%**	**100%**
Հատուցումներ	9,664	44,484	16,878	14,747	21,489	19,181	20,042	146,484	4%	98%	94%
Վարչական ծախսեր	-	-	246	267	316	332	369	1,530	11%	2%	2%
Գործառնական ծախսեր	-	149	21	25	34	44	859	1,133	1845%	0.23%	4%
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**9,665**	**44,633**	**17,146**	**15,039**	**21,838**	**19,557**	**21,269**	**149,147**	9%	**100%**	**100%**

***Կամուրջ** – ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագիր՝ նախքան ՁԻՆԱՊԱՀԻ շահառու դառնալը ծանր վիրավորված կամ անհետ կորած զինծառայողներին հատուցում տալու համար: 2020 թվականի դեկտեմբերից սկսած այս ծրագրով ամսական 300,000 ՀՀ դրամի չափով հատուցումներ են իրականացվում իրավասու շահառուներին:

**** ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀԿԲ) ներդրում** – 2021թ. ընթացքում կատարված բոլոր ծախսերը ֆինանսավորել է ՀՀ Կենտրոնական բանկը: Ֆինանսավորումը կարգավորվում է օրենքով և նախկինում հաստատվել է ԿԲ Խորհրդի կողմից:

***** Ներառում է 2008-2016թթ. դեպքերի մասով հատուցումները**

ԶԻՆԱՊԱՀԻ գործառնությունները 2017-2026թթ. ԵՌ 1 (ՍԳ)

Գրաֆիկը ներկայացնում է ԶԻՆԱՊԱՀԻ ֆինանսական մոդելի զարգացումը **2017 թվականից մինչև 2026 թվական ՍԳ-ով՝** անդրադառնալով ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ ընթացիկ կառուցվածքային փոփոխություններին: 2020–2021 թվականների շահառուների թվի աճից հետո, որը պայմանավորված էր աշխարհաքաղաքական իրադարձություններով, ԶԻՆԱՊԱՀԸ մուտք է գործում **կայունացման և կառուցվածքային հավասարակշռման փուլ**, որը բնութագրվում է եկամուտների առավել հավասարակշռված դինամիկայով և վերահսկվող ծախսերով՝ չնայած պարտադիր վճարների մուտքերի նվազմանը:

2022 թվականից սկսած ընդհանուր եկամուտները շարունակաբար գերազանցել են ընդհանուր ծախսերը՝ արտացոլելով **ֆինանսական կարգապահության ամրապնդումը** և ֆինանսական հոսքերի առավել կանխատեսելի կառուցվածքը: Այս միտումն առավել արտահայտված էր 2025 թվականին, երբ ընդհանուր եկամուտները հասել էին **61.9 միլիարդ ՀՀ դրամի**, իսկ ընդհանուր ծախսերը կազմել էին **19.6 միլիարդ ՀՀ դրամ**:

2026 թվականի սահող գնահատականի համաձայն ակնկալվում է եկամուտների և ծախսերի միջև տարբերության նվազում՝ պայմանավորված **պարտադիր դրոշմանիշային վճարների մուտքերի կրճատմամբ:** Ընդհանուր եկամուտները գնահատվում են շուրջ **34.2 միլիարդ ՀՀ դրամ**, ինչի վրա հիմնական ազդեցություն ունեցել են պարտադիր վճարների կառուցվածքին վերաբերող օրենսդրական փոփոխությունները, մինչդեռ ընդհանուր ծախսերը կանխատեսվում է, որ չափավոր կաճեն՝ **19.5 միլիարդ ՀՀ դրամից հասնելով 21.3 միլիարդ ՀՀ դրամի**:

Չնայած համակարգային փոփոխություններին՝ ընդհանուր միտումը շարունակում է արտացոլել ԶԻՆԱՊԱՀԻ անցումը դեպի **ավելի կայուն և կապիտալահեն ֆինանսական համակարգի**: Եկամուտների և ծախսերի միջև պահպանվող դրական տարբերությունը վերահաստատում է հիմնադրամի կարողությունը՝ շարունակաբար և կայուն կերպով կատարել իր երկարաժամկետ պարտավորությունները:

ԶԻՆԱՊԱՀԻ 2017-2026թթ. ԵՌ 1 ՍԳ եկամուտը ծախսերի համեմատ, մլն ՀՀ դրամ



ԶԻՆԱՊԱՀԻ 2025-2026թթ. ԵՌ 1-երի ֆինանսական կատարողականի համեմատություն

2026թ ԵՌ 1-ում ԶԻՆԱՊԱՀԻ ֆինանսական ցուցանիշներն արտացոլում են **եկամուտների առավել սահմանափակ միջավայր՝** զուգորդված **ծախսերի կայուն մակարդակով՝** 2025 թ. ԵՌ 1-ի համեմատ: Ընդհանուր եկամուտները նվազել են **27%-ով**, ինչը հիմնականում պայմանավորված է **պարտադիր վճարների 39% նվազմամբ՝** արտացոլելով դրանց կառուցվածքի և ծավալների վրա ազդեցություն ունեցած վերջին օրենսդրական փոփոխությունները: Նվիրատվությունները ևս նվազել են **55%-ով՝** շարունակելով պահպանել իրենց **սահմանափակ և լրացուցիչ դերը** ընդհանուր ֆինանսավորման կառուցվածքում:

Միևնույն ժամանակ, **ակտիվների կառավարման եկամուտները** աճել են **29%-ով՝** կազմելով ընդհանուր եկամուտների **32%-ը (2025 թ. ԵՌ 1-ի 18%-ի համեմատ)** և առավել ամրապնդելով իրենց դերը որպես հիմնադրամի ֆինանսական կայունության առանցքային բաղադրիչ: Թեև պարտադիր վճարները շարունակում են մնալ ֆինանսավորման ամենախոշոր աղբյուրը՝ կազմելով ընդհանուր եկամուտների **67%-ը,** եկամուտների կառուցվածքը շարունակաբար զարգանում է դեպի **ավելի դիվերսիֆիկացված և կապիտալահեն մոդել:**

Ծախսերը մնացել են ընդհանուր առմամբ կայուն՝ արձանագրելով **1% նվազում** նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Հատուցումները, որոնք կազմում են ընդհանուր ծախսերի **98%-ը**, նվազել են **2%-ով**, ինչը պայմանավորված է հատուցման նոր դեպքերի նվազմամբ՝ **2025 թվականի 9 դեպքի համեմատ՝ 2026թ. ԵՌ 1-ում արձանագրված 1 դեպքով:** Միաժամանակ վարչական և գործառնական ծախսերը չափավոր աճել են, սակայն շարունակում են մնալ **վերահսկելի և համաչափ գործառնական պահանջներին:**

Ընդհանուր առմամբ, 2026 թ. ԵՌ-ը արտացոլում է ԶԻՆԱՊԱՀԻ շարունակական անցումը դեպի **ավելի կապիտալահեն և կայուն ֆինանսական համակարգի**, որտեղ **ակտիվների կառավարման աճող դերը** և **համակարգված ծախսերի կառավարումը** շարունակում են ապահովել հիմնադրամի երկարաժամկետ կայունությունը՝ նույնիսկ հիմնական ֆինանսավորման աղբյուրներում տեղի ունեցող կառուցվածքային փոփոխությունների պայմաններում:

ՄԼՆ, ԴՐԱՄ	2025 ԵՌ1	2026 ԵՌ1	ԵՌ1'26 ԵՌ1'25-ի համեմատ	% հարաբ ԵՌ1 2025	% հարաբ ԵՌ1 2026
Եկամուտ պարտադիր վճարներից	12,679	7,683	-39%	81%	67%
Նվիրատվություններ	34	15	-55%	0.2%	0.1%
Կամուրջ նվիրատվություն*	7	19	186%	0.04%	0.2%
ՀՀԿԲ**	-	-	NA	0%	0%
Ակտիվների կառավարում	2,848	3,669	29%	18%	0.001%
Այլ եկամուտներ տուգանքներից	0.09	0.09	0%	0.001%	0.001%
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏ	**15,569**	**11,386**	**-27%**	**100%**	**100%**
Հատուցումներ	4,819	4,742	-2%	98%	98%
Կապ. ծախսեր	75	82	9%	2%	2%
Գործառնական ծախսեր	8	11	33%	0.21%	0.23%
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**4,903**	**4,835**	**-1%**	**100%**	**100%**

***Կամուրջ** – ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագիր՝ նախքան ԶԻՆԱՊԱՀԻ շահառու դառնալը ծանր վիրավորված կամ անհետ կորած զինծառայողներին հատուցում տալու համար: 2020 թվականի դեկտեմբերից սկսած այս ծրագրով ամսական 300,000 ՀՀ դրամի չափով հատուցումներ են իրականացվում իրավասու շահառուներին:

**** ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀԿԲ) ներդրում** – 2021թ. ընթացքում կատարված բոլոր ծախսերը ֆինանսավորել է ՀՀ Կենտրոնական բանկը: Ֆինանսավորումը կարգավորվում է օրենքով և նախկինում հաստատվել է ԿԲ Խորհրդի կողմից:

***** Ներառում է 2008-2016թթ. դեպքերի մասով հատուցումները**

2026թ. մասնաբաժինը 2017-2026թթ. ընդհանուր ցուցանիշում, ՍԳ

2017 թվականից մինչև 2026թ. ԵՌ 1-ի դրությամբ կանխատեսվող արդյունքների համաձայն՝

- **Պարտադիր վճարները** ակնկալվում է, որ կկազմեն ընդհանուր ցուցանիշների շուրջ **8%-ը:**
- **Նվիրատվությունները** կանխատեսվում է, որ կշարունակեն պահպանել իրենց սահմանափակ դերը՝ կազմելով մոտ **1%:**
- **Ակտիվների կառավարման վերագնահատման արդյունքները** ակնկալվում է, որ կկազմեն շուրջ **28%՝** ընդգծելով դրանց աճող նշանակությունը ֆինանսավորման ընդհանուր կառուցվածքում:
- **Հատուցումները** կանխատեսվում է, որ կկազմեն ընդհանուր ցուցանիշի շուրջ **14%-ը:**

ՄԼՆ ՀՀ դրամ	2025	2026թ. ԵՌ 1	2017-2026թ ԵՌ 1	% հարաբ 2026թ.
Պարտադիր վճարներ	49,171	19,494	252,518	8%
Նվիրատվություններ	106	92	9,721	1%
Ակտիվների կառավարում	12,570	14,519	52,440	28%
Հատուցումներ	19,181	20,042	146,484	14%

ԶԻՆԱՊԱՀԻ շահառուները և վճարված հատուցումները 2026թ. ԵՌ 1

- 2017–2026թթ. ԵՌ 1-ի **ընթացքում ԶԻՆԱՊԱՀԸ հատուցում է տրամադրել 5,511 շահառուի:**
- 2026թ. ԵՌ 1-ում հատուցում է տրամադրվել ընդամենը **1 նոր դեպքի**, մինչդեռ 2025թ. ԵՌ 1-ում հատուցվել էր **9 նոր դեպք:**
- 2026 թ. ԵՌ 1-ի ընդհանուր պատկերը ներկայացվում է ստորև.

2026թ. ԵՌ 1 – 1 դեպք

ԶՈՀՎԱԾ	ԱՆՀԱՅՏ ԲԱՑԱԿԱՅՈՂ	ԽՈՒՄԲ 1	ԽՈՒՄԲ 2
0	1	0	0

2025թ. ԵՌ 1 – 9 դեպք

ԶՈՀՎԱԾ	ԱՆՀԱՅՏ ԲԱՑԱԿԱՅՈՂ	ԽՈՒՄԲ 1	ԽՈՒՄԲ 2
4	1	0	4

2017-2026թթ. ԵՌ 1 հատուցումները՝ ԸՍՏ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ, 5,511 դեպքով



2017-2026թթ. ԵՌ 1 – 5,511* դեպքեր

ԶՈՀՎԱԾ	ԱՆՀԱՅՏ ԲԱՑԱԿԱՅՈՂ	ԽՈՒՄԲ 1	ԽՈՒՄԲ 2
4,580	240	158	533

*Զինծառայողների վերաբերյալ ներկայացված բոլոր թվային տվյալները արտացոլում են տվյալ հաշվետու ժամանակահատվածի դրությամբ արձանագրված կարգավիճակները:

ԶԻՆԱՊԱՀԻ շահառուներին վճարված հատուցումները 2017-2026թթ. ԵՌ 1

2017 թվականից մինչև 2026 թ. ԵՌ 1-ը հաշվառված **5,511 շահառուների** բաշխվածությունն ըստ զինծառայողների դասակարգման ներկայացված է ստորև գրաֆիկում: Շահառուների **43%-ը ժամկետային զինծառայողներ** են, **30%-ը՝ զորահավաքային կազմը** (ներառյալ՝ **17% զորահավաքային շարքայիններ, 2% զորահավաքային սպաներ**, ինչպես նաև **11% պայմանագրային սպաներ**): **19%-ը պայմանագրային շարքայիններ** են, իսկ **8%-ը՝ կամավորականներ**: Միևնույն ժամանակ, **պարտադիր սպայական կազմը** կազմում է շահառուների ընդամենը **0.3%-ը**:

2017-2026թթ. ԵՌ 1 ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԵՎ ԿՈՉՄԱՆ, 5,511 ԴԵՊՔՈՎ





2017-2026ԹԹ. ԵՌ 1-Ի ԿՏՐՎԱԾՔՈՎ ԱՄՓՈՓ ՊԱՏԿԵՐԸ

1

ՆՈՐ հատուցման դեպք 2025թ. ԵՌ 1-ում և 5,511 դեպքեր 2017-2026թթ.

4.7 մլրդ ՀՀ դրամի

հատուցումներ 2026թ. ԵՌ 1

131.1 մլրդ ՀՀ դրամի

հատուցում 2017-2026թթ. ԵՌ 1-ի դրությամբ՝ զոհվածներին, անհայտ բացակայողներին և հաշմանդամության իրավունքով շահառուներին

39%

պարտադիր վճարների նվազում 2026թ. ԵՌ 1-ում՝ 2025թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ

ԶԻՆԱՊԱՀԻ նվիրատվությունները՝ 2017-2026թթ. առաջին եռամսյակների կտրվածքով

2017-2026 թթ. ԵՌ 1-ում ԶԻՆԱՊԱՀԸ ստացել է շուրջ **9.7 միլիարդ ՀՀ դրամի նվիրատվություններ** (առանց Կամուրջ ծրագրի): Նվիրատվությունների ընդհանուր քանակը ակնկալվում է, որ կհասնի մոտ **97,000-ի**, իսկ մեկ նվիրատվության միջին չափը կկազմի շուրջ **100,000 ՀՀ դրամ**: Նվիրատվությունների հիմնական մասը շարունակել է իրականացվել հատկապես հակամարտությունների սրացման ժամանակաշրջանում:

2020թ. պատերազմից հետո նվիրատվությունների ծավալները շարունակում են նվազել և ներկայումս ակնկալվում է, որ կկայունանան ավելի ցածր մակարդակում՝ կազմելով **106 միլիոն ՀՀ դրամ 2025 թվականին** և շուրջ **91 միլիոն ՀՀ դրամ՝ 2026թ. ԵՌ 1-ի ՍԳ-ի արդյունքներով**, ինչը վկայում է նոր բազային մակարդակի ձևավորման մասին:

2026 թ. ԵՌ 1-ում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ընդհանուր նվիրատվությունները նվազել են **55%**-ով՝ շարունակելով 2020 թվականից հետո ձևավորված նվազման միտումը: Այս դինամիկան արտացոլում է նվիրատուների ակտիվության և ներգրավվածության նվազումը, որի պայմաններում նվիրատվությունները գնալով ավելի հաճախ կրում են **պարբերական և իրադարձություններով պայմանավորված բնույթ**, այլ ոչ թե շարունակական և կայուն հոսքերի տեսք:

Բացի այդ, մեկ նվիրատվության միջին չափը ևս արձանագրել է **47% նվազում**: Նվիրատվությունների հոսքերի վրա շարունակում են ազդեցություն ունենալ նաև արտաքին գործոնները, ներառյալ աշխարհաքաղաքական և ֆինանսական սահմանափակումները (այդ թվում՝ միջսահմանային փոխանցումների հետ կապված սահմանափակումները):

Նվիրատվությունները կատարվում են ինչպես բանկային փոխանցումների միջոցով, այնպես էլ zinapah.am պաշտոնական կայքի միջոցով՝ ապահովելով նվիրատուների համար հասանելի և թափանցիկ գործընթաց:

2017-2026թթ. նվիրաբերությունները ըստ արժույթի, ԵՌ 1 ՍԳ

Արժույթ՝ 000	2017-2020	2021	2022	2023	2024	2025	2026 RE	2017-2026 ԵՌ1 ՍԳ	2026 ԵՌ1 համեմատ. 2025 ԵՌ1
ՀՀ դրամ	4,676,538	739,093	301,333	173,750	87,650	68,982	65,157	6,112,417	-6%
Դոլար	4,833	879	492	233	191	89	65	6,783	-27%
Ռուբլի	115,069	6,517	455	1	2	NA	NA	NA	NA
Եվրո	798	122	34	20	31	6	5	1,017	-22%
2017-2026թթ. նվիրաբերությունները ՀՀ դրամով, ԵՌ 1 ՍԳ									
AMD	7,280,467	1,290,065	508,062	273,307	171,279	106,146	91,808	9,721,134	-14%
Նվիրատվությունների քանակ	44,576	25,976	12,665	5,209	4,167	2,401	2,100	97,094	-13%
Նվիրատվությունների միջին չափ	163	50	40	52	41	44	44	100	-1%

2017-2026թթ. նվիրաբերությունները ըստ արժույթի, ԵՌ 1

Արժույթ՝ 000	2025 ԵՌ1	2026 ԵՌ1	2026 ԵՌ1 համեմատ. 2025 ԵՌ1
ՀՀ դրամ	27,951	12,713	-55%
Դոլար	14	6	-57%
Ռուբլի	NA	NA	NA
Եվրո	2	1	-63%
2017-2026թթ. նվիրաբերությունները ՀՀ դրամով, ԵՌ 1			
ՀՀ դրամ	34,367	15,308	-55%
Նվիրատվությունների քանակ	627	529	-16%
Նվիրատվությունների միջին չափ	55	29	-47%

Գործընկերային կապերի հաստատում և ընդլայնում

ԶԻՆԱՊԱՀԸ շարունակում է ամրապնդել իր գործընկերային կապերը հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների և բարեգործական հաստատությունների հետ՝ նպատակ ունենալով աջակցել զինծառայողներին և նրանց ընտանիքներին: Այս գործընկերությունները միտված են շահառուների սոցիալական, ֆիզիկական և հոգեբանական բարեկեցության ապահովմանը՝ համակարգային և շարունակական նախաձեռնությունների միջոցով:

Շահառուների անձնական զարգացմանն ու երկարաժամկետ բարեկեցությանը նպաստելու նպատակով ԶԻՆԱՊԱՀԸ իր գործընկեր կազմակերպությունների հետ նախաձեռնել է սոցիալական ինտեգրման և զարգացման մի շարք ծրագրեր, որոնց համար մշակվել է ամբողջական պլան՝ 2026թ. առաջնահերթություններով:

ԶԻՆԱՊԱՀԸ բազմաթիվ խորհրդակցական հանդիպումներ է կազմակերպել պետական մարմինների, ՀԿ-ների և գործընկեր հիմնադրամների հետ՝ միավորելու ջանքերը հետևյալ ուղղություններով՝

- **Կրթություն և հմտությունների զարգացում**
- **Տնտեսական ինտեգրում և զբաղվածություն**
- **Ձեռնարկատիրություն և բիզնեսի խթանում**
- **Համայնքային ընդգրկում և կայունության ձևավորում**

Հավատարիմ իր առաքելությանը՝ ԶԻՆԱՊԱՀԻ աջակցությամբ և միջնորդությամբ մի շարք համատեղ նախաձեռնություններ են իրականացվել տարբեր կազմակերպությունների հետ գործընկերությամբ: Այս նախաձեռնությունները նպատակ ունեն տրամադրել թիրախավորված աջակցություն և համապատասխան տեղեկատվություն, ինչպես նաև խթանել շահառուների սոցիալական ինտեգրումը Հայաստանի ողջ տարածքում:

Համագործակցություն Innobiz հասարակական կազմակերպության հետ

2025թ. հունիսին ստորագրված փոխըմբռնման հուշագրի շրջանակում ԶԻՆԱՊԱՀԸ շարունակել է համագործակցությունը Innobiz-ի հետ՝ նպաստելու շահառուների շրջանում ձեռնարկատիրության զարգացմանը և տնտեսական հնարավորությունների ընդլայնմանը:

ՄԱԿ-ի Բնակչության գործունեության հարցերով հիմնադրամի հետ համագործակցությամբ Innobiz-ը մեկնարկել է **Ցատկ ծրագիրը**, որը նախատեսված է խոցելի խմբերում ընդգրկված՝ **19–40 տարեկան կանանց և աղջիկների համար**, ովքեր բնակվում են Կոտայքի, Արագածոտնի, Տավուշի և Սյունիքի մարզերում: ԶԻՆԱՊԱՀԸ աջակցել է նախաձեռնությանը՝ իրականացնելով շահառուների թիրախավորում, իրազեկման և ներգրավման աշխատանքներ:

Համագործակցության արդյունքում ծրագրին գրանցվել է ԶԻՆԱՊԱՀԻ **127 շահառու**, այդ թվում՝ **Արցախից տեղահանված 12 շահառու**: Շահառուները մասնակցել են **Innobiz Academy**-ի կրթական ծրագրին, ներգրավվել մենթորական հանդիպումներում և մշակել բիզնես մոդելներ:

Ընդհանուր առմամբ ծրագրի ամբողջ փուլն ավարտել է **85 մասնակից**, որոնցից **16-ը** դիմել են **WoW Foundation-ի** դրամաշնորհային ծրագրին՝ GIZ-ի հետ համագործակցությամբ, իսկ **12-ը՝ Ցատկ ծրագրի** դրամաշնորհային փուլին:

Արձանագրված արդյունքները վկայում են համագործակցության արդյունավետության մասին՝ շահառուների կարողությունների զարգացման և տնտեսական ինքնուրույնության խթանման ուղղությամբ:

ԶԻՆԱՊԱՀԻ շահառուներին միտված աջակցման ծրագրեր՝ գործընկեր կազմակերպությունների հետ 2026թ.

Համագործակցություն Ազնավուր հիմնադրամի հետ

Ազնավուր հիմնադրամը հայտարարել էր **Այրիների տնտեսական զորակցման ծրագրի** հայտերի ընդունման մեկնարկի մասին:

Ծրագրի նպատակն էր աջակցել կին շահառուներին՝ զարգացնելով նրանց ձեռնարկատիրական հմտությունները և տրամադրելով նպատակային ֆինանսական աջակցություն սեփական բիզնեսի ստեղծման կամ ընդլայնման համար:

Ծրագրին կարող էին մասնակցել ինչպես սկսնակ, այնպես էլ արդեն փորձ ունեցող կին ձեռնարկատերեր: Դրամաշնորհ ստանալու նախապայմաններից էր մասնակցի կողմից ծրագրի ընդհանուր բյուջեի առնվազն **10%-ի չափով սեփական ներդրման ապահովումը**:

Դրամաշնորհը տրամադրվում էր իրավաբանական անձանց: Ֆիզիկական անձ դիմորդները, շահառու ճանաչվելու դեպքում, պարտավոր էին մինչև պայմանագրի կնքումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցվել որպես **անհատ ձեռնարկատեր (ԱՁ) կամ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)**:

Համագործակցության արդյունքում ԶԻՆԱՊԱՀԻ շահառուները դիմել են ծրագրին, որոնցից **մեկ շահառու հաջողությամբ հաղթահարել է ծրագրի բոլոր փուլերը և ճանաչվել դրամաշնորհի ստանալու իրավունք ունեցող շահառու:**

ԶԻՆԱՊԱՀԻ շահառուներին միտված աջակցման ծրագրեր՝ գործընկեր կազմակերպությունների հետ 2026թ.

Համագործակցություն ՀԱՅՈՐԴԻ հիմնադրամի հետ

Հայորդի հիմնադրամի կողմից իրականացվող **Հայրենի Տների Կառուցում** ծրագիրը շահառուների բնակարանների կահավորման նպատակային աջակցության նախաձեռնություն է:

Յուրաքանչյուր ընտանիքի համար ծրագրի միջին արժեքը կազմում է շուրջ **800,000–1,000,000 ՀՀ դրամ**, որի շրջանակում շահառուներին տրամադրվում է առաջին անհրաժեշտության կահույք՝ ինքնարժեքով: Շահառուների ընտրությունն իրականացվում է ըստ դիմումների հերթականության՝ առաջնահերթություն տալով առավել խոցելի ընտանիքներին:

Համագործակցության արդյունքում ծրագրին դիմել է **11 ընտանիք**: Իրականացվել են տնայցեր և կարիքների գնահատումներ, որոնց արդյունքում **5 ընտանիք ճանաչվել է համապատասխանող և ստացել ամբողջական կահավորման աջակցություն**:

Մի ընտանիքի դեպքում արձանագրվել է բնակարանի վերանորոգման անհրաժեշտություն, ինչի պատճառով ծրագրին մասնակցությունը հետաձգվել է մինչև համապատասխան աշխատանքների ավարտը:

Նախաձեռնությունը արտացոլում է շահառուների կենսապայմանների բարելավմանն ուղղված **թիրախային և կարիքահեն մոտեցումը**:

ԶԻՆԱՊԱՀԻ շահառուներին միտված աջակցման ծրագրեր՝ գործընկեր կազմակերպությունների հետ 2026թ.

Շահառուների հետ հանդիպումներ

Հաշվետու ժամանակահատվածում ԶԻՆԱՊԱՀԸ Տավուշի մարզի Իջևան քաղաքում կազմակերպել է շահառուների հետ հանդիպում՝ նպատակ ունենալով ամրապնդել հիմնադրամի առաքելությունը, խորացնել շահառուների հետ կապը և ներկայացնել նրանց իրավունքներին, հասանելի ծրագրերին և ծառայություններին վերաբերող կարևոր տեղեկատվություն:

Այս հանդիպումները կարևոր հարթակ են երկկողմ հաղորդակցության համար՝ հնարավորություն տալով շահառուներին բարձրաձայնել իրենց խնդիրներն ու հարցերը և ստանալ անմիջական պատասխաններ՝ կառուցվածքային հարցուպատասխանի ձևաչափով:

Հանդիպումների ընթացքում բարձրացված հիմնական հարցերն ու առաջարկությունները վերաբերում էին՝

- Ամսական հատուցումների տրամադրման ժամկետի հնարավոր երկարաձգմանը (20 տարվանից ավելի) և հատուցումների գումարների հնարավոր ինդեքսավորմանը՝ հաշվի առնելով առկա գնաճը,
- Բանկերի փոփոխություններին և գումար ստանալիս հաճախ հանդիպող ուշացումներին,
- Առողջապահական ծառայությունների հասանելիության բարելավմանը, առողջության ապահովագրության վերաբերյալ հարցադրումներին:

Քննարկումները վերահաստատեցին, որ շահառուները շարունակում են առերեսվել մի շարք խնդիրների և մարտահրավերների, որոնք պահանջում են հստակեցում, շահերի ներկայացում և նպատակային աջակցություն:

Նման հանդիպումների միջոցով շարունակական ներգրավվածությունը մնում է կարևոր գործիք վստահության ձևավորման, առաջացող կարիքների բացահայտման և շահառուակենտրոն լուծումների մշակման համար: ԶԻՆԱՊԱՀԸ շարունակելու է հետևողականորեն իրականացնել այս նախաձեռնությունները՝ ապահովելու իր շահառուների համար երկարաժամկետ և նշանակալի ազդեցություն:

Աջակցող ծրագրեր ենթաբաժին Zinapah.am կայքում

2025թ. ԶԻՆԱՊԱՀԸ zinapah.am կայքում գործարկեց նոր ենթաբաժիններ՝ Աջակցող ծրագրեր **և** Օգտակար հղումներ, ընդլայնելով շահառուների համար տեղեկատվության և հնարավորությունների թվային հասանելիությունը: Այս բաժիններում պարբերաբար թարմացվում են տեղեկություններ ԶԻՆԱՊԱՀԻ գործընկեր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի, ինչպես նաև Հայաստանի պետական մարմինների կողմից նախաձեռնված ծրագրերի մասին:

Այս նախաձեռնության հիմնական առավելություններից մեկն այն է, որ **շահառուները կարող են անմիջապես դիմել ներկայացված ծրագրերին**, ինչը բացում է նոր հնարավորություններ սոցիալական աջակցության, մասնագիտական ուսուցման, կրթության և անձնական զարգացման համար: Լայն իրազեկվածություն և հասանելիություն ապահովելու նպատակով նոր ենթաբաժինները ակտիվորեն ներկայացվել են **ԶԻՆԱՊԱՀԻ 2025թ. ընթացքում անցկացված ամսական մարզային հանդիպումների շրջանակում**, որոնց ընթացքում շահառուներին ծանոթացրել են հասանելի ծրագրերին և մասնակցող գործընկեր կազմակերպություններին:

Այս նախաձեռնությունը միտված է **ԶԻՆԱՊԱՀԻ աջակցման ցանցի ամրապնդմանը և շահառուների կարողությունների զարգացմանը՝** ռեսուրսների նկատմամբ հասանելիության բարելավման միջոցով, նպաստելով նրանց սոցիալական և տնտեսական հաջող վերաինտեգրմանը և վերահաստատելով ԶԻՆԱՊԱՀԻ հանձնառությունը երկարաժամկետ, կայուն ազդեցության ապահովման ուղղությամբ:

ԶԻՆԱՊԱՀ®
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ցանկանում ենք մեր խորին շնորհակալությունը հայտնել Հայաստանի և ամբողջ աշխարհի բոլոր անհատներին, կազմակերպություններին/համայնքներին, ովքեր կատարել են իրենց պարտադիր դրոշմանիշային վճարումները և անհատական նվիրատվությունները:

Ձեր աջակցության շնորհիվ ԶԻՆԱՊԱՀԸ կարողանում է իրականացնել իր առաքելությունը՝ հոգալ այն զինծառայողների և նրանց ընտանիքների կարիքները, ովքեր իրենց կյանքն ու առողջությունը զոհաբերել են հանուն Հայաստանի և նրա սահմանների անվտանգության:
ԶԻՆԱՊԱՀ

Միասին՝ զինվորիս կողքին...

ԶԻՆԱՊԱՀ®
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԻԱՑԵՔ ՄԵԶ

ՃԱՆԱՉԵՔ ՄԵԶ

Իմացեք ավելին ԶԻՆԱՊԱՀԻ մասին։
Այցելեք մեր կայքը, հետևեք մեզ սոցիալական հարթակներում։

ԱՋԱԿՑԵՔ ՄԵԶ

Կատարեք ձեր նվիրատվությունը և աջակցեք զինվորներին ու նրանց ընտանիքներին, ովքեր զոհաբերել են ամենակարևորը՝ իրենց կյանքն ու առողջությունը հանուն Հայրենիքի։

ՊԱՏՄԵՔ ՄԵՐ ՄԱՍԻՆ

Պատմեք մեր առաքելության և կատարած աշխատանքի մասին։

ՆՎԻՐԱԲԵՐԵԼ

ԶԻՆԱՊԱՀ®

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԻԱՍԻՆ՝ ԶԻՆՎՈՐԻՍ ԿՈՂՔԻՆ...

@zinapah

zinapah.am

info@zinapah.am

Վազգեն Սարգսյան փող. 26/1
Երևան, 0010, ՀՀ

ՆՎԻՐԱԲԵՐԵԼ